

րութեան այլասերումը: Գիտական եւ լուրջ կշռելու համար մեր բառերը պարտաւոր ենք քիչ մը ուսներէն հոտիլ: Ու օտար բառերու այս մ'թերքը անտանելի կ'ընէր անոր պարզուկ զեկոյցն անգամ: Այս չարաղէտ իսանդը, հիմա աւելի քան սուր, կը սպաննէ մեր լեզուն Հայրենիքին մէջ: Մասսա: Անշուշտ: Բայց շեշտօրէն բաժնուած երկու կարգի, դասակարգի: Պարապ տեղը գրուած չէր Capitalը, որուն իմ անծանօթ մնալը քրէական յանցանք կը թուէր ընկեր Մաթիկին: Ան էր արմատը հայ յեղափոխութեան: Ու իմ ուղեղը զուր կը յոգնէր փնտռելու կապը հրեայ տեսաբանին եւ թուրքին դէմ անհաւասար կռուի ելած Մրտոներուն, Սաքոներուն, Սերոբներուն միջեւ: Երկու դասակարգութիւն: «Լաւ հարկաւոր էր հասկանալ»: Ու տեսութիւն: Ու անխուսափելի, մեծ, յաւակնոտ գիտութիւնը, Փլիոլոկիան մա'նաւանդ (չատ հաւատք չունէր հոգեբանութեան, զոր կ'ընդունէր անհարազատ (բաղարս) զաւակը առաջինին), որ կը միջամտէր յաղթական ու կը յարդարէր անհամաձայնութիւնները, մեր ցեղային տուրքերը ու պատմութեան պրոցեսը հաշտեցնելով անխորտակելի օրէնքներուն հարկադրանքին, հանելով մեր դժբախտութիւնները՝ մեր երկրաբանութենէն ու ձորերէն, որոնք մեր երկիրը անջատողական զօրաւոր կեդրոններու կը բաժնեն ու կ'արգիլեն տարածուն մշակոյթ ու կենցաղ: Երբեւիցէ եղա՞ծ էր մեր երկհազարամեայ պատմական «էվոլիւցիայի ընթացքում» այն ցանկալի միքաթը, զոր մեր նոր ազգայնութիւնը, Մխիթարեան կնքահայրութեամբ, շրջաբերութեան էր հանած կէս դարէ յադին: Յնորք, իսկի՛ բանդագուշանք, այդ միութիւնը, մեր հոգիներուն մէջ, քանի որ չկար անիկա մեր հոգիները ստեղծող տարրին՝ հողին մէջը: Ո՛վ խորախորհուրդ պատգամները մեր Մաթիկներուն ու անոնց հետքովը, հիմա, պատկառելի հանդէսներու սիւնակներէն կոկոզավիզ պոռացող աքլորներուն, որոնք նահանգային հայեր կը պահանջեն ապառնիէն, ու մեր գոյութիւնը կը դնեն կենդանակերպին տակը այդ բարձր ազդմունքնե-